

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6, չորեքշաբթի.—**Տօն Ծնընդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Առավոտյան Մայր տաճարում, ողջ միաբանության և ուսանողության մասնակցությամբ, պաշտվում է Ս. Ծննդյան ժամերգությունը:

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը Վեհարանում, զգեստավորված, եկեղեցական թափորով, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու Ս. Ծննդյան պատարագը:

Սուրբ սեղանին սպասավորում են Տ. Գևորգ եպիսկոպոսը, Տ. Մոմիկ վարդապետը, Տ. Զատիկ աբեղան և սարկավագների դասը:

Մայր տաճարը լիքն է ուխտավոր և հավատացյալ բազմությամբ:

Ավագ սեղանի առաջ, ատյանում, ս. պատարագին ներկա են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը, տեղակալ Ա. Հասրաթյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և այլ հյուրեր:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսը տալով ողջ հայ ժողովրդին, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Հայրապետական գեղեցիկ և բովանդակալից քարոզը տպված է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3—5):

Նույն օրը, երեկոյան ժամը 23-ին, Հայոց Հայրապետի Ծննդյան քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Ս. պատարագի ավարտին հարյուրավոր հավատացյալներ Ս. Հաղորդություն են ստանում երկյուղած բարեպաշտությամբ, պատարագիչ Հայոց Հայրապետի ձեռքով: Հաղորդություն ստացողների մեջ էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած հեռավոր Բուենոս Այրեսի Մարի Մանուկյան երկրորդական վարժարանի այս տարվա երկսեռ ուսանող-ուսանողուհիները, որպես Մայր Աթոռի հարազատ զավակներ:

Այնուհետև ավանդական հանդիսությամբ կատարվում է, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Ավագ խորանի բեմի վրա՝ Զրօրհնյաց կարգը՝ ի հիշատակ Հորդանան գետում Քրիստոսի մկրտության Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Ապա Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ ընդունում է բազում շնորհավորանքներ օրվա տոնի առիթով:

Վեհարանում էին նաև Բուենոս Այրեսի Մարի Մանուկյան երկրորդական վարժարանի այս տարվա շրջանավարտները, շուրջ 25 հոգի, իրենց տեսչի գլխավորությամբ, որոնք աջահամբույրով շնորհավորեցին Հայոց Հայրապետի տոնը՝ Քրիստոսի Սուրբ Ծնունդը:

Հայոց Հայրապետը զգացված սրտով ու ջերմ սիրով օրհնում է շրջանավարտներին և տալիս Իր պատգամը հեռավոր այդ ափերի վրա ապրող Իր զավակներին՝ լինելու օրինապահ քաղաքացիները իրենց հյուրընկալող բարի և քրիստոնյա Արգենտինայի և զավակները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ճշմարիտ հայրենասերները հայոց վերածնված ու միակ մայր հայրենիքի:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, օրվա տոնի առիթով, տրվում է ճաշկերույթ, որն անցնում է ջերմ մթնոլորտում: